

Հաշվետվություն

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ Տնտեսագիտություն և կառավարում ամբիոնի դասախոջ Նարինե Մանուկյանի այցի Եվրոմիության Էրազմուս+ KA107 ծրագրի շրջանակներում Իտալիայի Տուշա համալսարան

2018 թվականի ապրիլի 22-28-ը պաշտոնական այցով գիտակրթական միջազգային կենտրոնի վարչական և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ գործուղվել եմ Իտալիայի Տուշայի համալսարան:

Նախկան մասնակցելս այս շարժունակության ծրագրին մշակել եմ գործուղման ընթացքում անելիքներիս պլանը, որը ներառում էր հետևյալ գործողությունները՝

- ծանոթանալ Տուշայի համալսարանի «Տնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ, ուսումնասիրել ամբիոնի հիմնական գործառույթները և ապագա ծրագրերը,
- ուսումնասիրել ամբիոնի կրթական ծրագրերը, հետագա վերլուծության և բենչամարքինգ կատարելու նպատակով,
- հնարավորության դեպքում մասնակցել դասընթացներին և սեմինարներին,
- հանդիպել պրոֆեսոր Ալեսիո Մարիա Բրասինիին և Էլիսա Յանդիորիոյին քննարկելու համար մեր կողմից դասավանդվող նույն մասնագիտական առարկաները,
- ուսումնասիրել համալսարանի Intranet ցանցի կառուցվածքը, ծանոթանալու համար, թե ինչպես է կազմակերպված Էլեկտրոնային նյութերից և փաստաթղթերից օգտվելու գործընթացը:

Այցի շրջանակներում Գիտակրթական միջազգային կենտրոնի պատվիրակության կազմում մասնակցեցի տարատեսակ հանդիպումներին, մասնավորապես հանդիպեցի Տուշայի համալսարանի «Տնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի միջազգային համագործակցության պատասխանատու պրոֆեսոր Ջակոմո Բրանկայի հետ: Հանդիպման ընթացքում մեր թիմը ներկայացրեց ամբիոնի իրականացրած մագիստրոսական կրթական ծրագրերը, քննարկեց հետագա համագործակցության հեռանկարները, մասնավորապես համաձայնություն ձեռք բերվեց մշակել համատեղ կրթական ծրագիր՝ կրկնակի դիպլոմի շնորհմամբ:

Հաջորդ հանդիպումը Տուշայի համալսարանի որակի ապահովման դեպարտամենտի ղեկավար Պաոլո Ալֆրեդո Կապուանիի հետեր, չնայած որ որակի բաժնի աշխատանքերը

իմ գործառույթներին անմիջապես չէր վերաբերում, պետք է ասեմ որ քննարկումները շատ հետադարձ էին և բովանդակալից:

Հաջորդ հանդիպումը «Տնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի “Վեբ մարքեթինգ” լաբորատորիայի ղեկավար, պրոֆեսոր Էլիսա Յանդիորիոյի հետ էր: Ես մասնակցեցի իր դասին և հետևեցի Էրազմուս+ կրեդիտային շարժունակության ծրագրով այս պահին Տուշայի համալսարանում ուսուցանող գիտակրթական միջազգային կենտրոնի երեք մագիստրանտների ուսումնառության ընթացքին:

Պրոֆեսոր Էլիսա Յանդիորիոյի հետ պայմանավորվեցինք հետագա քննարկումները կապված առարկայական ծրագրերի համապատասխանության և ծրագրային փաթեթների համադրման մեխանիզմների քննարկումները շարունակենք Էլեկտրոնային փոստով:

Ապրիլի 26-ին Տուշայի համալսարանի ռեկտորատի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր հանդիպում-նիստ, որի շրջանակներում մեր թիմը ներկայացրեց «Տնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի հիմնական գործառույթները և կրթության որակի ապահովման ներբուհական համակարգը:

Կցանկանայի նշել, որ Տուշայի համալսարանում ներկայացված նյութերը և շնորհանդեսը, և մեր այցի հաշվետվություն-տեսահոլովակը պատրաստել եմ ես իմ կոլեգաների հետ միասին:

Կարող եմ ասել, որ բոլոր այն հիմնական կետերը որոնք պլանավորել էի անել գործուղման ընթացքում հնարավոր եղավ իրականացնել, բացի պրոֆեսոր Ալեսիո Մարիա Բրասինիի հետ հանդիպումը, ցավոք նա այդ ժամանակ բաղաժամ չէր:

Կցանկանայի իմ շնորհակալությունը հայտնել ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ղեկավարությանը և արտաքին կապերի բաժնի ղեկավարին ընձեռած հնարավորության համար:

Հաշվետվությանս կից հավելված 1-ում ներկայացնում եմ պրոֆեսոր Էլիսա Յանդիորիոյի կողմից “Վեբ մարքեթինգ” և իմ կողմից “Թվային մարքեթինգ” դասավանդվող առարկաների առարկայական ծրագրերի վերլուծությունը:

Տուշայի համալսարանի «Տոնտեսագիտություն, ինժեներիա, հասարակություն և բիզնես» ամբիոնի “Վեր մարքեթինգ” և ՀՀ ԳԿՄԿ «Տոնտեսագիտություն և կառավարում» ամբիոնի “Թվային մարքեթինգ” առարկայական ծրագրերի համադրում և վերլուծություն

Դասագանդվող առարկաների նպատակները և խնդիրները

Տուշայի համալսարանի “Վեր մարքեթինգ” դասընթացի շրջանակներում ուսանողը ստանում է վեր-միջավայրի և սոցիալական ցանցերի մասին տեղեկությունները և ծանոթանում օգտակար գործիքակազմին հետագայում կիրառելու համար տարբեր կազմակերպություններում: Դասընթացը, կազմված է լաբորատոր աշխատանքների տեսքով, որտեղ ուսումնասիրվում են հետերնետի կողմից կազմակերպություններին առաջարկվող կապի հիմնական հնարավորությունները:

ԳԿՄԿ “Թվային մարքեթինգ” դասընթացի նպատակն է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի Գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրանտին ներկայացնել թվային տնտեսությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, ժամանակակից թվային գործիքները առցանց միջավայրում մարքեթինգային գործունեություն վարելու համար, հետերնետից բացի, ուսումնասիրել նաև այլ թվային հարթակները, օրինակ թվային հեռախոսակապը և թվային հեռուստատեսությունը: Ուսումնասիրել ժամանակակից գլոբալ տեղեկատվական հասարակության ձևավորման առանձնահատկությունները և ծանոթանալ տեղեկատվական տնտեսության մոդելներին:

Կրթական վերջնարդյունքները

Տուշայի համալսարանի “Վեր մարքեթինգ”

Ուսանողները

- կծանոթանան հետերնետի և առցանց ծառայությունների բնութագրերին և հնարավորություններին,
- կկարողանան արդիականացնել և բարելավել հաղորդակցումները հանրության հետ,
- կկարողանան ակտիվորեն ներգրավել սպառողներին ապրանքի և ծառայությունների առաջարկների մեջ, ժամանակին կարձագանքեն ապրանքի և ծառայության բարելավմանը ուղղված պահանջներին և առաջարկություններին,

- կրարձրացնեն յուրաքանչյուր սպառողի հետ անհատական շփման արդյունավետությունը, օգտագործելով ժամանակակից առցանց գործիքակազմը:

ԳԿՄԿ “Թվային մարքեթինգ”

Ուսանողները

- կկարողանան արդյունավետ օգտագործել ժամանակակից թվային տեխնոլոգիաները մարքեթինգի և գովազդի համար,
- կիմանան ինչ տեխնոլոգիաներ են ընկած ինտերնետի աշխատանքի հիմքում, ինչ արձանագրություններով է համակարգված թվային միջավայրի աշխատանքը,
- կճանոթանան մարքեթինգային արշավների հիմնական ցուցանիշներին, կհաշվարկեն մարքեթինգային ROI-ն և կկիրառեն KPI ցուցանիշները համապատասխան ապրանքի կենսացիկլի,
- կկարողանան կիրառել ժամանակակից թվային նոր հարթակների հնարավորությունները և առանձնահատկությունները բիզնեսում:

Առարկայական ծրագրերի հիմնական թեմաները

N	Հիմնական թեմաները	Տուշայի համալսարանի “Վեբ մարքեթինգ”	ԳԿՄԿ “Թվային մարքեթինգ”
1.	Թվային մարքեթինգի զարգացման պատմությունը, ինտերնետ լսարանի քանակական և որակական հատկությունները, համալիր ինտերնետ մարքեթինգ	+	+
2.	Ինչպես է կազմակերպված ինտերնետի աշխատանքը, TCP/IP ընտանիքի արձանագրությունները	-	+
3.	Ժամանակակից վեբ-կայքերը կազմակերպության գործունեության մեջ, Wordpress գործիքներ	+	-*
4.	Ավանդական և առցանց գովազդի տեսակները և E-mail մարքեթինգ	+	+
5.	Յուրահատուկ վաճառող առաջարկ (USP)	-	+
6.	SEO (search engine optimization) մարքեթինգ և վեբ-անալիտիկ գործիքներ	+	+

* Wordpress-ի օգտագործումը կրառում եմ հեռավառ հարթակի դասընթացներում

7.	Մարքեթինգային արշավների և ինտերնետ-գովազդի արդյունավետության գնահատման մեթոդները, KPI ցուցանիշների և մարքեթինգային ROI հաշվարկները	+	+
8.	Մարքեթինգը սոցիալական ցանցերում	Facebook; Twitter; Instagram;Pinterest; Google+; LinkedIn and YouTube	Facebook; Instagram; LinkedIn and YouTube
9.	Չեղիմաստության կառուցումը և կառավարումը առցանց միջավայրում	-	+
10.	Առկա ծրագրային փաթեթների ինտեգրումը սոցիալական ցանցերում առաջխաղացման համար	+	-

Առարկայական ծրագրերի հիմնական թեմաների վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ մեր ուսանողները “Թվային մարքեթինգ” առարկայական շրջանակում սովորում և գործնականում կիրառում են բոլոր այն թեմաները, որոնք ներառված են նաև Տուշայի համալսարանի “Վեբ-մարքեթինգ” առարկայական ծրագրում, գտնում են, նաև, որ պետք է “Թվային մարքեթինգ” առարկայական ծրագրում ներառեն նաև թեմա 10-ը: Հաշվետվությանս վերջում, կցանկանայի նշել նաև, որ պատրաստ եմ դասավանդել “Տեղեկատվական մենեջմենթ” և “Թվային մարքեթինգ” մասնագիտական առարկաները անգլերեն լեզվով, եթե մեր ամբիոնը իրականացնի կրկնակի դիպլոմի շնորհմամբ համատեղ կրթական ծրագիրը:

29.05.2018

Նարինե Մանուկյան

Տնտեսագիտություն և կառավարում ամբիոնի դասախոյ